

Գյուղատնտեսական տնտեսություն

Բնակչությանը պարենամթերքով ապահովման խնդիրը պահանջում է իրականացնել մեծածավալ միջոցառումներ և ծրագրեր: Անկախ իր զարգացվածությունից գյուղատնտեսությունը եղել և մնալու է տնտեսության առաջատար հյուղերից մեկը: Գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության և գյուղատնտեսական հումքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջումները: Գյուղատնտեսության մեջ գործում են նույն տնտեսական օրենքները, ինչ՝ տնտեսության մյուս հյուղերում: Տնտեսության այս հյուղի առանձնահատկություններն են. **1.** Արտադրության գլխավոր միջոցը հողն է, ինչն արտադրության այլ միջոցների հետ համեմատ չի մաշվում, իսկ հիշտ «օգտագործման» դեպքում բարելավվում է իր որակական հատկանիշները: **2.** Որպես արտադրության միջոցներ գյուղատնտեսության մեջ հանդես են գալիս կենդանի օրգանիզմները, ինչպիսիք են կենդանիներն ու բույսերը: **3.** Արտադրվող ապրանքը մասնակցում է արտադրության հետագա գործընթացին: Գյուղատնտեսության մեջ, որպես արտադրության միջոցներ օգտագործվում են սերմեր, անասնակեր, ինչպես նաև անասնազլխաբանակի մեծ մասը՝ հողի վերականգնման և հողատարածքի մակերեսի մեծացման համար: Այս բոլորը պահանջում է լրացուցիչ նյութական ռեսուրսներ, արտադրական նշանակալի շինություններ և օբյեկտներ: **4.** Գյուղատնտեսության մեջ աշխատանքային ժամանակաբաժանը համընկնում է ապրանքի արտադրության ժամանակաբաժանի հետ: Գյուղատնտեսությունում արտադրության ժամանակաբաժանը ընդգրկում է այն ժամանակամիջոցները, երբ գործընթացը իրականացվում է մարդու ազդեցության ներքո (վար, բերհանված և այլն) և երբ այն իրականացվում է անմիջապես բնական գործոնների ներքո (աճ, հասունացում և այլն): Արտադրության և աշխատանքային ժամանակամիջոցների համապատասխանությունը պայմանավորում է գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը: Վերջինս նշանակալի ազդեցություն է բողնում արտադրության կազմակերպման, տեխնիկայի, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, և վերջին հաշվով նաև՝ ընդհանուր առմամբ տնտեսության արդյունավետության վրա: **5.** Աշխատանքի բաժանումը գյուղատնտեսության մեջ իրականացվում է այլ կերպ՝ հողային, աշխատանքային և նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման նպատակներում ձգտում են հասնել բուսաբուծության և անասնապահության հյուղերի օպտիմալ համադրության և զարգացման: **6.** Կախված այն հանգամանքից, որ գյուղատնտեսության մեջ, որպես կանոն, տեղաշարժվում են արտադրության միջոցները, իսկ աշխատանքի առարկան մնում է մեկ վայրում, ուստի գյուղատնտեսական տեխնիկայի վերագինման բնույթը նշանակալիորեն տարբերվում է այլ ոլորտների հետ համեմատ: Ընդհանուր ռեսուրսների պահանջարկը այստեղ ավելի մեծ է, ընդ որում գյուղատնտեսության աշխարհագրական բաշխումը և արտադրության սեզոնային բնույթը ավելացնում է տեխնիկային և արտադրության միջոցների պահանջարկը: Գյուղատնտեսության նշված առանձնահատկությունները պահանջում են համապատասխան վերլուծություններ ոլորտի նյութատեխնիկական բազային ձևավորման, արտադրության կազմակերպման ու կառավարման, արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման համար՝ սահմանելով տնտեսության այս հյուղի զարգացման ուղղությունները: Գյուղատնտեսական արտադրության ծավալների ավելացումը հնարավոր է իրականացնել նյութական և ֆինանսական լրացուցիչ միջոցների նպատակային ներդրմամբ՝ ընդլայնելով երկրի (երջանի) գյուղատնտեսության արտադրական պոտենցիալը: Գյուղատնտեսության մեջ ներդրումները իրենցից ներկայացնում են տնտեսական գործունեության (գյուղատնտեսության վարման) իրականացման գործընթացում հիմնական և բաժանառու միջոցների ձեռքբերման երկարաժամկետ ներդրումներ: Հետևաբար, ներդրումները ոչ միայն հիմնական միջոցների ընդլայնում է, այլ նաև գյուղացիական տնտեսությունների բաժանառու միջոցների ձևավորման և համալրման ծախսեր են: Երկարաժամկետ ներդրումները գյուղատնտեսության մեջ արդարացված են, եթե դրանք նպաստում են եկամտի սոցիալական էֆեկտի ստացմանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այսօր անհրաժեշտ է. **1.** բարձրացնել գյուղատնտեսական արտադրության կայունության մակարդակը, **2.** ինտենսիվացնել գյուղատնտեսական արտադրությունը և մեկենայացնել արտադրական գործընթացը, **3.** ընդլայնել հողաբարելավման մասշտաբները, **4.** կատարելագործել արտադրության կազմակերպման և կառավարման ձևերը, **5.** խոշորացնել արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման աստիճանը, **6.** բարելավել գյուղատնտեսական առանձին մթերքների արտադրության տեղաբաշխվածությունը, **7.** միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական արտադրության արդյունավետության հետագա բարձրացման, գյուղատնտեսական հիմնական արտադրամիջոցի՝ հողի, գյուղատնտեսական տեխնիկայի և աշխատանքի արդյունավետ օգտագործման համար: